ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԾՁԲ-18/20-1>>

ք. Երևան 24 հունվարի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հաղթանակ 2000» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Դանիելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **14833700** (տասնչորս միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Նորք Մարաշ վարչական շրջանը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Հաղթանակ 2000» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Երևան, Անդրանիկի 4/8
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 193004674001
Հ/Հ 900012416120	ՀՎՀՀ 00832885
Գ. Չթրյան ----------	Ա. Դանիելյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 24 » հունվարի 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
	Նորք Մարաշ վարչական շրջան						
40	79951110/474	Հայոց բանակի օր Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, մշակութային հիմնարկների աշխատակիցների և սաների կողմից իրականացնել այցելություն Սբ.Աստվածածին եկեղեցու բակում գտնվող զոհված ազատամարտիկների հուշարձանին, տեղադրել ծաղկեպսակ (1 հատ, պատրաստված բնական ծաղիկներով՝ մեխակ, 75x75սմ ծաղկայի հատվածը, բարձրությունը գետնից՝ 1,5մ) , վարչական շրջանի ղեկավարի աշխատասենյակում կազմակերպել ֆուրշետային հյուրասիրություն 25 անձի հաշվով (ֆուրշետ՝ թարմ սեզոնային մրգերից պատրաստած, թարմ քաղրավենիքի և խմորեղենի տեսականի, շամպայն, հայկական կոնյակ, մրգահյութեր):	դրամ	200000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հունվար 28/
41	79951110/474	Տեառնընդառաջի տոնակատարություն Տեառնընդառաջի տոնակատարության անցկացման վայրն է Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու բակը: Տոնակատարության համար հարկավոր է ապահովել համապատասխան հզորության ձայնային տեխնիկա՝ մշակույթային միջոցառումը կազմակերպելու նպատակով: Համերգային ծրագրի ընթացքում հրավիրվում են ազգագրական համույթներ, որոնք ներկայացնում են տոնական միջոցառմանը հարիր ազգային երգեր ու պարեր: Եկեղեցու բակում պատրաստվում է խարույկ, որի համար անհրաժեշտ է ապահովել չոր փայտանյութ: Եկեղեցու բակում կազմակերպվում է ավանդական հյուրասիրություն 250 անձի հաշվով /քաղցրավենիք, թարմ խմորեղեն, սեզոնային մրգեր, գինի, մրգահյութեր, տոնին հարիր կերակրատեսակներ, մեկանգամյա օգտագործման սպասք /բաժակ, ափսե, պատառաքաղ/, սև աղբի	դրամ	1528700	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/փետրվար/

		տոպրակներով՝ միջոցառման ավարտին աղբը հավաքելու և աղբաման տեղափոխելու համար/: Միջոցառմանը հրավիրվում են նախորդ տարվա ընթացքում Սբ. Աստվածածին եկեղեցում պսակադրված, Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակիչ հանդիսացող նորապսակներ, մոտ 70 նորապսակ, որոնց տրվում են նվերներ /սպասքի կոպլեկտներ, տարոսիկներ/:					
42	79951110/474	Բարեկենդանի տոնակատարություն Բարեկենդանի տոնակատարության անցկացման վայրն է Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու բակը: Միջոցառման համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան հզորության ձայնային տեխնիկա՝ մշակույթային միջոցառումը կազմակերպելու նպատակով: Եկեղեցու բակում կազմակերպվում է ավանդական հյուրասիրություն, որի համար անհրաժեշտ է /քաղցրավենիք, թարմ խմորեղեն, սեզոնային մրգեր, գինի, մրգահյութեր, տոնին հարիր կերակրատեսակներ՝ փաթիլան, սոռն, բիբիկ, մեկանգամյա օգտագործման սպասք /բաժակ, ափսե, պատառաքաղ/, սև աղբի տոպրակներով՝ միջոցառման ավարտին աղբը հավաքելու և աղբաման տեղափոխելու համար/: Մշակութային համերգային ծրագրում ելույթ են ունենում վարչական շրջանի դպրոցների ազգագրական համույթները: Պատրաստում են խաղերի ու ներկայացումների համար նուրիներ, /կերպարանափոխված տիկնիկներ/, ցորենի հասկից պատրաստված ծաղկամերներ /ծաղկեփնջեր/:	դրամ	200000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/փետրվար/
43	79951110/474	Կանանց տոն Մարտի 8 տոնակատարություն Կանանց տոնը անցկացվելու է Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են՝բացիկներ 300 հատ /21x30 սմ բացիկ, 23x32 սմ ծրար, թղթի խտությունը 400 գրամ, գունավոր (4 գույն), կորդենանս (իտալական), ոսկեզօծում, տպագրությունը՝ երկկողմանի/, դպրոցների, մանկապարտեզների և մշակութային և սպորտային հիմնարկների աշխատող կանանց ծաղիկներ՝վարդեր՝երկարությունը 70սմ, 300 հատ, պատվոգրեր-շնորհակալագրեր թվով 30 հատ (Չափը՝ A4, միակողմանի կավճապատ, քաշը՝ 250 գր., գունավոր (4 գույն), թղթի տեսակը՝ կորդենանս (իտալական), ոսկեզօծում, տպագրությունը՝միակողմանի), և համերգային ծրագիր՝ երգիչների և կատարողների հրավիրում:	դրամ	1000000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	Մարտի 8"

44	79951110/474	Ապրիլի 7 Մայրության և գեղեցկության տոն Մայրության, գեղեցկության և սիրո տոնին նվիրված միջոցառման համար անհրաժեշտ է կազմակերպել հյուրասիրություն /150 հոգու համար վարչական շրջանի աշխատակազմի շենքում /քաղցրավենիք, թարմ խմորեղեն, սեզոնային մրգեր, գինի, մրգահյութեր, մեկանգամյա օգտագործման սպասք /բաժակ, ափսե, պատառաքաղ/, տրամադրել 150 հատ ծաղիկներ (վարդեր՝ երկարությունը 70սմ):	դրամ	500000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	Ապրիլի 7
45	79951110/474	Սբ. ՀաՍբ. Հատկի տոնակատարության անցկացման վայրն է Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու բակը: Տոնակատարության համար հարկավոր է ապահովել համապատասխան հզորության ձայնային տեխնիկա՝ մշակութային միջոցառումը կազմակերպելու նպատակով: Համերգային ծրագրի ընթացքում հրավիրվում է ազգագրական համույթ, որը ներկայացնում է տոնական միջոցառմանը հարիր ազգային երգեր ու պարեր: Եկեղեցու բակում անհրաժեշտ է կազմակերպել հյուրասիրություն, որի համար անհրաժեշտ է ձու՝ 2000 հատ, ձվի ներկ՝ 300 փաթեթ տարբեր գույների, աղ /ձուն ներկելու համար/: Եկեղեցու բակում կազմակերպվում է ավանդական հյուրասիրություն 250 անձի հաշվով /քաղցրավենիք, թարմ խմորեղեն, սեզոնային մրգեր, գինի, մրգահյութեր, տոնին հարիր կերակրատեսակ՝ մատաղ /ախառ/, մեկանգամյա օգտագործման սպասք /բաժակ, ափսե, պատառաքաղ/, սև աղբի տոպրակներով՝ միջոցառման ավարտին աղբը հավաքելու և աղբաման տեղափոխելու համար/: Պատրաստում են խաղերի ու ներկայացումների համար նուրիներ, /կերպարանափոխված տիկնիկներ/, ցորենի հասկից պատրաստված ծաղկամերներ /ծաղկեփնջեր/: տկի տոնակատարություն	դրամ	1250000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/մարտ, ապրիլ/
46	79951110/474	Եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումներ Միջոցառումները եռօրյա են : Միջոցառմանը մասնակցում են Լեռնային Ղարաղաղից ժամանած հյուրերը:Առաջին օրը Սբ. Աստվածածին եկեղեցում կատարվում է արցախցի 10 ծնողազուրկ երեխաների և Երևանի մանկան տան 10 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մկրտության արարողություն: Մկրտության համար անհրաժեշտ են՝ոսկյա խաչեր՝ 20 հատ, նարոտներ՝ 20 հատ, մոմեր՝ 20 հատ/սպիտակ,25 սմ երկարությամբ,8 սմ տրամագծով/, սպիտակ բամբակյա սրբիչներ՝ 20 հատ/ճերմակ, բամբակյա 60-80 չափսի, վրան ասեղնագործած խաչ/, դույլեր՝ 3 հատ պլաստմասսայե/10լիտրանոց/ թասեր՝ պլաստմասսայե՝ջուրը լցնելու համար՝3 հատ, վերնաշապիկներ՝20 հատ/ճերմակ, տարբեր չափսերի, բամբակյա, վրան նկարված Սբ. Աստվածածին եկեղեցին,	դրամ	2000000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/ապրիլ 24/

		գրված <Սբ. Մկրտություն> Նորք-Մարաշ , 1Սբ. Աստվածածին եկեղեցի, 2017թ./: Հյուրասիրություն եկեղեցու բակում /քաղցրավենիք, թարմ խմորեղեն, սեզոնային մրգեր, գինի, մրգահյութեր, մեկանգամյա օգտագործման սպասք /բաժակ, ափսե, պատառաքաղ/, սև աղբի տոպրակներով՝ միջոցառման ավարտին աղբը հավաքելու և աղբաման տեղափոխելու համար/: Երկրորդ օրը կազմակերպվում է երեխաների հանգիստը՝ էքսկուրսիա Երևան քաղաքի տեսարժան վայրեր, որի համար անհրաժեշտ է ավտոբուս/16 տեղանոց/, 3-անգամյա սնունդ: Երրորդ օրը այցելություն Եղեռնի հուշահամալիր, որի համար անհրաժեշտ է ավտոբուս /60 տեղանոց/, ծաղկեպսակ (1 հատ, պատրաստված բնական ծաղիկներով՝ մեխակ, 75x75սմ ծաղկային հատվածը, բարձրությունը գետնից՝ 1,5մ), ծաղիկներ, երկուանգամյա սնունդ:					
47	79951110/474	Հաղթանակի և խաղաղության տոն Հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են իրականացնել այցելություն Հաղթանակի զբոսայգի, տրանսպորտային միջոց / 1 հատ ավտոբուսի վարձակալություն՝ 50 նստատեղով/, տրամադրել ծաղիկներ (մեխակներ 150 հատ, երկարությունը 80սմ) և ծաղկեպսակ (1 հատ, ծաղկեպսակը պետք է պատրաստված լինի եռոտանի ոտքերի վրա ամրացված օղակով: Օղակին ամրացված բիոֆլորներ, որոնք պատված լինեն ծաղիկներով և կանաչով, տրամագիծը՝ 120սմ, օգտագործվող ծաղիկները հերբերա, վարդեր, քրիզանթեմ և այլն) կազմակերպել հյուրասիրություն /50 հոգու համար (երկու տեսակի աղցան՝ մայրաքաղաքային և կեսար, զովացուցիչ ըմպելիքներ՝ լիմոնադ, բնական հյութ, հանքային և բնական ջուր, ալկոհոլային ընմպելիքներ՝ գինի, օղի, երկու տեսակի տաք ուտեստ՝ խոզի խորոված, ճուտ ֆրիով , երշիկեղեն, կանաչու տեսականի, զեյթուն, պանիր, հաց և լավաշ): Դրամական պարգևներ արցախյան պատերազմի մասնակիցներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին:	դրամ	1310000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	Մայիսի 9"
48	79951110/474	Համբարձման տոնակատարություն Համբարձման տոնակատարության անցկացման վայրն է Նորք-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու բակը: Համբարձման տոնը նշելու համար անհրաժեշտ է Սբ.Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպել 150 անձի հաշվով բացօթյա հյուրասիրություն՝ /, զովացուցիչ ըմպելիքներ/բնական և գազավորված/, գաթա, խառը մրգեր /խնձոր,նարինջ, բանան, կաթնապուր/,ձայնային տեխնիկայի վարձակալություն 3-4 կվտ հզորությամբ:Պատրաստում են խաղերի ու	դրամ	225000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/մայիսի/

		ներկայացումների համար նուրիներ, /կերպարանափոխված տիկնիկներ/, ցորենի հասկից պատրաստված ծաղկամերներ /ծաղկեփնջեր/:					
49	79951110/474	Վերջին զանգի տոնակատարություն Վերջին զանգի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են Նորք-Մարաշ վարչական շրջանի 4 դպրոցների շրջանավարտներին ծաղիկների պատրաստված ծաղկամերներ /ծաղկեփնջեր/:	դրամ	200000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/մայիս/
50	79951110/474	Հայաստանի առաջին Հանրապետության տոնին նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգու բեմի կամարի ձևավորում՝/փուչիկներով եռագույն շղթա, եռագույն դրոշներ 20 հատ /0.75սմ-1.5մ/, , հնչյունային տեխնիկա 10-13 կվտ հզորությամբ, հաղորդավար, միջոցառման ընթացքումպաղպաղակի տրամադրում հանդիսատես երեխաներին /պաղպաղակի բաղադրությունը՝ Անարատ կաթ, անարատ կաթի փոշի, յուղազերծված կաթի փոշի, կարագ, շաքարավազ, կակաոյի զանգված, կակաոյի կարագ, բուսական յուղ, հակաօքսիդանտ՝ INS319, կիտրոնաթթու՝ INS330, վանիլին, էմուլգատոր լեցիտին՝ INS322 և INS476, կայունացուցիչներ՝ INS471, INS412:անրապետություն տոն	դրամ	160000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/մայիսի 28/
51	79951110/474	Երեխաների իրավունքների պաշտպանության օր Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգու բեմի կամարի ձևավորում՝ /փուչիկներով շղթա 30մ/ հնչյունային տեխնիկա 10-13 կվտ հզորությամբ, , հեքիաթային հերոսներ, հաղորդավար, անակնկալ զվարճախաղեր, խաղ վիկտորինաներ, 500 հատ փուչիկների և 300 հատ պաղպաղակի տրամադրում հանդիսատես երեխաներին /պաղպաղակի բաղադրությունը՝ Անարատ կաթ, անարատ կաթի փոշի, յուղազերծված կաթի փոշի, կարագ, շաքարավազ, կակաոյի զանգված, կակաոյի կարագ, բուսական յուղ, հակաօքսիդանտ՝ INS319, կիտրոնաթթու՝ INS330, վանիլին, էմուլգատոր լեցիտին՝ INS322 և INS476, կայունացուցիչներ՝ INS471, INS412, խմելու ջուր/ սառը հրավառություն:	դրամ	250000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հունիսի 1/
52	79951110/474	Ցտեսություն մանկապարտեզ տոնակատարություն Ցտեսություն մանկապարտեզ> տոնակատարություն- միջոցառում՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգում, բեմի կամարի ձևավորում/՝ փուչիկներով շղթա (50 մ), տոնը խորհրդանշող պաստառներ, երաժշտական և լուսային տեխնիկա (13-15 կվտ հզորությամբ) , երգիչներ՝ Յոգի, երեք պարային	դրամ	940000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հունիս/

		համույթներ, տոնական համերգի ընթացքում լուսային և ձայնային բարձր որակի ապահովում, հաղորդավար, նվերներ երեխաներին՝ 120 երեխա/նկարների ալբոմներ/:					
53	79951110/474	ՀՀ Պետական խորհրդանիշների և Սահմանադրության օր ՀՀ Պետական խորհրդանիշների և Սահմանադրության օրվա միջոցառումները կանցկացվեն Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգում: Անհրաժեշտ է Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգու բեմի կամարի ձևավորում՝ /փուչիկներով շղթա 30մ/, հզորությամբ, հաղորդավար, միջոցառմանը հարկավոր է ապահովել համապատասխան հզորության ձայնային տեխնիկաով՝ մշակույթային միջոցառումը կազմակերպելու նպատակով:	դրամ	150000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հուլիսի 5/
54	79951110/474	ՈՒրախ ամառ, երջանիկ մանկություն Երևանյան ամառ "ՈՒրախ ամառ, երջանիկ մանկություն" Երևանյան ամառ նշելու համար անհրաժեշտ է Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգու բեմի կամարի ձևավորում՝ /փուչիկներով շղթա 30մ/ հնչյունային տեխնիկա 10-13 կվտ հզորությամբ, հաղորդավար, դրոշներ, ձևավորման պարագաներ/, երգիչներ՝ 2 հոգի, 1 պարային խումբ, հեքիաթների հերոսներ:	դրամ	450000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հուլիս, օգոստոս/
55	79951110/474	Բակային ճամբարների կազմակերպում Բակային ճամբարները կազմակերպվելու են հ. 26, հ.61 ,Օլիմպոս կրթահամալիրի դաշտերում և Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգում հունիս և հուլիս ամիսների ընթացքում: Դպրոցների դաշտերում իրականացնել ձևավորումներ՝ փուչիկներ, ձայնային տեխնիկա 10-13 կվտ հզորությամբ: Էքսկուրսիայի ընթացքում տրամադրել ավտոբուս՝ 60 տեղանոց:	դրամ	300000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հուլիս, օգոստոս/
56	79951110/474	Գիտելիքի գրի և դպրության օր Գիտելիքի գրի և դպրության օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են Նորք-Մարաշ վարչական շրջանի ով 4 դպրոցների տարածքներում նոր ուսումնական տարվա առիթով իրականացնել ձևավորումներ /այդ թվում ամեն դպրոցի համար տրանսպարանտ <<Բարի գալուստ>> թեմայով, փուչիկներ և այլ ձևավորման պարագաներ/, դպրոցների մանկավարժներին և աշակերտներին ողջունելու նպատակով յուրաքանչյուր դպրոցի համար շնորհավորական ուղերձի տպագրություն (Չափը՝ A4, միակողմանի կավճապատ, քաշը՝ 250 գր., գունավոր (4 գույն), թղթի տեսակը՝ կորդենանս (իտալական), տպագրությունը՝միակողմանի),	դրամ	150000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/սեպտեմբերի 1/
57	79951110/474	ՀՀ Անկախության տոն Անկախության տոնը նշելու համար անհրաժեշտ է Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգու բեմի կամարի ձևավորում՝ /փուչիկներով շղթա 30մ/ և	դրամ	490000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/սեպտեմբերի 21/

		դրոշներով, հարկավոր է ապահովել համապատասխան հզորության ձայնային տեխնիկա՝ մշակույթային միջոցառումը կազմակերպելու նպատակով: Համերգային ծրագրի ընթացքում հրավիրվում են ազգագրական համույթներ և պարային խմբեր, որոնք ներկայացնում են տոնական միջոցառումը:					
58	79951110/474	Նոր Մարաշի վերածնության օր Նոր Մարաշի վերածնության օրվան նվիրված միջոցառում՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգում, բեմի կամարի ձևավորում/՝ փուչիկներով շղթա (50 մ), տոնը խորհրդանշող պաստառներ, երաժշտական և լուսային տեխնիկա (13-15 կվտ հզորությամբ) , երգիչներ՝ 7 հոգի, երեք պարային համույթներ, տոնական համերգի ընթացքում լուսային և ձայնային բարձր որակի ապահովում, հաղորդավար, միջոցառման ավարտին հրավառություն:	դրամ	1400000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/սեպտեմբեր/
59	79951110/474	Ուսուցչի օր Ուսուցչի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է իրականացնել հյուրասիրություն 200 անձի համար (երկու տեսակի աղցան՝ մայրաքաղաքային և կեսար, զովացուցիչ ըմպելիքներ՝ լիմոնադ, բնական հյութ, հանքային և բնական ջուր, ալկոհոլային ընմպելիքներ՝ գինի, օղի, երկու տեսակի տաք ուտեստ՝ խոզի խորոված, ճուտ ֆրիով, երշիկեղեն, կանաչու տեսականի, զեյթուն, պանիր, հաց և լավաշ): Տրամադրել ծաղիկներ՝ 150 անձի համար, պատվոգրեր և շնորհակալագրեր՝ 20 հատ, 100 հատ բացիկի տրամադրում (21x30 սմ բացիկ, 23x32 սմ ծրար, թղթի խտությունը 400 գրամ, գունավոր (4 գույն), կորդենանս (իտալական), ոսկեզօծում, տպագրությունը՝ երկկողմանի):	դրամ	790000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հոկտեմբեր 5/
60	79951110/474	Թարգմանչաց տոն Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառում՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի զբոսայգում, բեմի կամարի ձևավորում/՝ փուչիկներով շղթա (50 մ), տոնը խորհրդանշող պաստառներ, երաժշտական և լուսային տեխնիկա (13-15 կվտ հզորությամբ):	դրամ	140000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/հոկտեմբեր/
61	79951110/474	Ամանորյա տոնակատարություն Ամանորյա տոնը նշելու համար անհրաժեշտ է ռեստորանային համալիրում կազմակերպել հյուրասիրություն՝ 250 անձի հաշվով: Սրահը պետք է ձևավորված լինի , փայլերով և տոնին համապատասխան այլ զարդարանքով, սեղաններին տեղադրված լինեն ծաղկեփնջեր: Հյուրասիրության ընթացքում պետք է մատուցվի ձիթապտղի տեսականի՝ սև և կանաչ , քամած մածուն, լոլիկ, վարունգ, խառը կանաչի, խառը թթու, պանրի տեսականի՝ լոռի, հոլանդական, ռոկֆոր, մսեղենի տեսականի՝ ֆիլե, բաստուրմա, սուջուխ, երշիկ, աղցանների տեսականի՝ մայրաքաղաքային,կեսար,հունական, նրբություն, տաք ուտեստներ՝ խորոված	դրամ	1200000	1	***Նորք Մարաշ վարչական շրջան***	/դեկտեմբեր/

		խոզի և կարտոֆիլի, տապակած հավի ճուտ և կարտոֆիլի ֆրի, տապակած ձուկ(ստերլյադ), հաց՝ տարբեր տեսակի, լավաշ, ալկոհոլային ըմպելիքներ՝ օղի բարձրորակ /0,5լ/, կոնյակ՝ առնվազն 5 տարի հնեցմամբ /0,5լ/, գինի՝ կարմիր կիսաքաղցր/0,75լ/, շամպայն՝ կիսաչոր /0,75լ/, ոչ ալկոհոլային ըմպելիքներ, բնական հյութեր /1լ/ հանքային ջրեր /0,5լ/,մրգի տեսականի՝ բանան,նարինջ,մանդարին, խնձոր, կիվի, տանձ, սուրճ՝ լուծվող և սև, թեյ: Միջոցառման համերգային մասի ապահովման համար անհրաժեշտ է՝ 1 հաղորդավար, երգիչներ՝ 5 հոգի:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900012416120

Գ. Չթրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հաղթանակ 2000» ՍՊԸ
ք. Երևան, Անդրանիկի 4/8
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004674001
ՀՎՀՀ 00832885

Ա. Դանիելյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« 24 » « հունվարի » 2018թ.կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-18/20-1 գնման պայմանագրի հավելված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
1	Մշակութային միջոցառումների կազմակերպում	2928700	2928700	2928700	9763700	9763700	9763700	12703700	12703700	12703700	14833700	14833700	14833700	14833700
	Ընդամենը	2928700	2928700	2928700	9763700	9763700	9763700	12703700	12703700	12703700	14833700	14833700	14833700	14833700

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ու
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
Հ/Հ 900012416120

Գ. Չթրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Հաղթանակ 2000» ՍՊԸ
ք. Երևան, Անդրանիկի 4/8
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004674001
ՀՎՀՀ 00832885

Ա, Դանիելյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
« ԵՔ-ԲՄԾՁԲ-18/20-1» *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան « 24 » հունվարի 2018 թ.**

«Հաղթանակ» ՍՊԸ–ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա, Դանիելյանի /նույն.քարտ 000298802, տրված 30.10.2012 թ. 001-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված « ԵՔ-ԲՄԾՁԲ-18/20-1»* ծածկագրով գնման ընթացակարգին:

Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Հաղթանակ 2000» ՍՊԸ
ք. Երևան, Անդրանիկի 4/8
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004674001
ՀՎՀՀ 00832885

Ա, Դանիելյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Հաղթանակ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 193004674001

6. Վճարողի ՀՎՀՀ 00832885

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ 1483370 /մեկ միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր յոթանասուն /

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝*(պայմանագրի կատարման ապահովում)*

15.Պայմանագրի ծածկագիրը՝՝ « ԵՔ-ԲՄԾՁԲ-18/20-1»

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*